ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Վ. Ե. ԽՈՋԱՐԵՑԱՆ
ՀՀ ԴԱԱ ակադեմիկոս

Երկար ժամանակ Հայաստանը բնութագրվել է բնակչության բավական բարձր բնական աճով, չնայած նրա քաղաքային բնակչությանը հատուկ է եղել վերարտադրության կարգավորված արդի տիպը։ 1980—1990 թթ. բնակչության բնական աճը տատանվում էր 18—19, ծնունդը՝ 24—25, իսկ մահացությունը՝ 5—7 պրոմիլի սահմաններում։ 1970—1980-ականներին Հայաստանը բնութագրվում էր աշխարհում ամենացածր մահացությամբ։ Բնակչության բարձր ծնունդը , ցածր մահացությունը մինչև 1970-ականի վերջերը ուղեկցվել է միգրացիայի դրական, իսկ 1979—1988 թթ.՝ բացասական մնացորդով։ Եվ շատ հանրապետությունների համեմատությամբ ցածր էր մանկամահացությունը (1000 ծնված երեխաներից մինչև մեկ տարեկան դառնալը 1989—1990 թթ. մահացել են 22,6, իսկ 1994 թ.՝ 18 երեխա) և բարձր էր կյանքի միջին տևողությունը, որը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով զգալիորեն իջավ։

Սակայն, վերջին տասնամյակում, մասնավորապես, 1988 թ. սկսած, հանրապետությունում ժողովրդագրության ասպարեզում տեղ գտած իրադարձությունները իրենց որոշակի հետքն են թողել և կշարունակեն թողնել բնակչության բնական աճի օրինաչափությունների և ապագա միտումների դրսևորման, դրա տեղաբաշխման, առանձնապես միգրացիոն հոսքերի ինտենսիվացման վրա։ Բնական աղետ տեսած, պատերազմական գրված և չգրված օրենքներից կքված փոքրիկ հանրապետությունն այսօր փատտորեն կանգնել է մեկ այլ աղետի դեմ հանդիման, աղետ, որը սպառնում է ազգի գենոֆոնդի զոյատևմանը։ Գնալով նվազում է հանրապետության բնակչության բնական աճի թափը, պակասում ծնունդը, ավելանում մահացությունը, արտագաղթն ընդունել է ահագնացող չափեր։ Անշուշտ, դա կարելի է համարել նաև այսօրվա սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական իրավիճակի անմիջական անդրադարձը։ Բայց արդյո՞ք միայն այդ։

Ընդհանուր առմամբ բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների՝ պատմականորեն հանդես եկող և տվյալ պահին որպես ավտոնոմ գործող ինքնուրույն երևույթների և հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո։ Հանգամանորեն քննարկենք վերջին 10—15 տարիներին բնակչության վերարտադրությունը բնութագրող օրինաչափությունների բնույթը և առանձին գործոնների դերի ազդեցությունը բնակչության աճի ընթացքի վրա։ Բնակչության բնական աճը երկրում ծնվածների և մահացածների թվաքանակի տարբերության արտահայտությունն է։ Այս բոլորի մասին ամբողջական պատկերացում է տալիս ներքոհիշյալ աղյուսակը։

Ինչպես նկատում ենք, ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների, ծնունդաբերության ընդհանուր գործակիցը (1000 բնակչի հաշվով ծնվողների թիվը) 1985 թ. 25,0 պրոմիլից իջել է, 1994 թ. կազմել է 13,7, իսկ մահացությունը (1000 բնակչի հաշվով մահացածների թիվը) 6,1 պրոմիլից բարձրացել է և կազմել 6,6 պրոմիլ։ Երևույթների նման ընթացքը պայմանավորված է հանրապետությունում միաժամանակ գործող օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոնների դրսևորմամբ։ Ծննդաբերության և մահացության վրա ազդող այդ գործոնները կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ. պատերազմներ և շրջափակումներ, բնակչության տա-

րիքային կաղմ, երկրաշարժ, սոցիալ-տնտեսական պայմաններ, բացասական միջրացիա և այլն։ Ի՞նչ ազդեցություն են գործել այդ երևույթները բնակչության ծնունդաբերության և մահացության վրա քննարկվող ժամանակահատվածում։

Աղյուսակ 1

ՀՀ բնակչության բնական աճի գուցանիշները 1980—1994 թթ.[1]

	Թվականները					
	1980	1985	1990	1992	1993	1994
1. Բնական աճը	17,4	18,9	17,4	12,2	8,4	7,1
այդ թվում՝						
քաղաքային բնակավայրերում	16,6	17,2	15,5	10,5	6,6	5,2
գյուղական բնակավայրերում	19,0	20,6	19,6	15,7	12,3	10,9
2. Ծնունդը	23,0	25,0	24,0	19,2	15,8	13,7
այդ թվում՝						
քաղաքային բնակավայրերում	21,8	22,8	22,0	17,4	13,9	11,8
գյուղական բնակավայրերում	25,3	27,3	26,5	22,9	18,8	17,4
3. Մահը	5,6	6,1	6,6	7,0	7,4	6,6
այդ թվում՝						
քաղաքային բնակավայրերում	5,2	5,6	6,5	6,9	7,3	6,6
գյուղական բնակավայրերում	6,3	6,7	6,9	7,2	7,5	6,8

Քննարկվող ժամանակաշրջանում ծննդի մակարդակի վրա հետք են թողել բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերը։ Մինչև օրս կրում ենք և մոտ ապագայում նույնպես կկրենք երկրորդ համաշխարհայինի հետևանքները։ Եթե ցանկացած պատերազմի հետևանքով տնտեսության կորուստները հնարավոր է վերականգնել մի քանի տարում, ապա ժողովրդագրական հետևանքները պարբերաբար կրկնվում են և իրենց ազդեցությունն են ունենում բնակչության բնական աճի վրա։

Հետպատերազմյան տարիներից սկսած, առ այսօր, Հայաստանում տեղի է ունեցել ժողովրդագրական բռնկում՝ երեք փուլերով։ Առաջին փուլն ընդգրկեց հետպատերազմյան շրջանը և ավարտվեց 1950-ական թվականների սկզբներին։ Դա բացատրվում էր պատերազմի ավարտով և զորացրումով, որը հանգեցրեց ամուսնացողների թվի ավելացմանը, շատ ընտանիքներում խախտված վերարտադրության ընթացքի նորմալացմանը։ Երկրորդ փուլն սկսվեց 1950-ական թվականների կեսերից և տևեց մեկ տասնամյակ։ Երրորդը սկսվեց 1970-ի երկրորդ կեսից և տևեց մինչև 1980-ի կեսերը։ 1960 թ. և 1986 թ. Հայաստանում գրանցվեց շատ բարձր ծնունդ, համապատասխանաբար՝ 74,8 և 81,2 հազար երեխա[2]։ Դա Հայաստանի ներկա տարածքում նրա պատմության մեջ երբևիցե գրանցված ամենաբարձր ծնունդն էր։

Դրա հետ մեկտեղ երկրորդ համաշխարհայինը բնակչության վերարտադրության վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ ոչ միայն պա-

---

1 Աղյուսակը կազմված է ըստ «Демографический ежегодник 1991» վիճակագրական ժողովածուի (М., 1991, с. 62) և Հայաստանի վիճակագրական տարեգրքի, 1993—1994 (Երևան, 1995, էջ 15)։

2 Население СССР 1987, М., 1988, с. 124.

տերազմի տարիներին, այլև 1960-ական թվականների կեսերից մինչև 1970-ականի կեսերը և 1980-ականի վերջերից մինչև 1990-ականի կեսերը, երբ, մի դեպքում, սմուսնության տարիք թևակոխեցին պատերազմի տարիներին ծնվածները, իսկ մյուս դեպքում՝ դրանց երեխաները։ Հենց այդ պատճառով 1970 թ. Հայաստանում 20 հազարով ավելի քիչ երեխաներ ծնվեցին, քան 1960 թ., մինչդեռ բնակչությունն ավելացել էր 661 հազար մարդով[3]։ Բավական է ասել, որ ՀԽՄՀ-ում 1970 թ. ամուսնության ամենաակտիվ տարիքի բնակչությունը (21—29 տարեկաններ) 1959 թ. նկատմամբ պակասել էր շուրջ 17 %-ով, այդ թվում գյուղական բնակավայրերում՝ կիսով չափ, ըստ որում, 25—29 տարեկաններն այդ ընթացքում պակասել էին 50 %-ով[4]։ Վերջին ցուցանիշով ՀԽՄՀ-ն երկրորդ հանրապետությունն էր և զիջում էր միայն ՌԽՍՖՀ-ին։ Բնակչության 1000 շնչի հաշվով ամուսնությունների թիվը 1960 թ. 11,2 մարդուց 1970 թ. իջել և կազմել էր 7,3 մարդ[5]։

Տասնամյակներ առաջ մեր կատարած կանխատեսումներով ենթադրվում էր, որ 1987 թ. սկսած ծննդի կորագիծը պետք է թեքվի, և մինչև 1990-ականի կեսերը նվազի։ Նման ենթադրությունը հիմնավորվում էր նրանով, որ այս տարիներին պտղաբերության տարիք կթևակոխեն պատերազմի տարիներին ծնվածների երեխաները։ Եվ իրոք, 1987 թ. Հայաստանում ծնվեց 78 հազար, իսկ 1988-ին՝ 74 հազար 700 երեխա։ Մինչդեռ, ինչպես հիշատակվեց, 1986 թ. Հայաստանում բացարձակ ծնունդը հասավ կորագծի ամենաբարձր կետին։ Պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի ներկա տարածքում գրանցվեց ծնվողների ամենաբարձր թիվը՝ 81 հազար 192 երեխա, որը, ցավոք, հավանաբար, այլևս չի կրկնվի ապագա բազմաթիվ տասնամյակների ընթացքում։

Ինչպես նկատում ենք, 1986 թ. համեմատ 1987 թ. ծնված երեխաների թիվը պակասեց 2,7 հազարով, 1988 թ.՝ 6,5 հազարով[6]։ 1986 թ. ծնված երեխաների բացարձակ թիվը և ծնելիության բարձր գործակիցները պայմանավորված էին նրանով, որ պտղաբերության տարիքի կանանց (համաշխարհային փիճակագրության մեջ այդ տարիքն ընդգրկում է 15—49 տարեկան կանանց) ընդհանուր թվակազմի մեջ չափազանց մեծ տոկոս էին կազմում 20—24 տարեկան կանայք, և, ընդհակառակը, փոքր էր մնացած տարիքային խմբերում ընդգրկվածների տեսակարար կշիռը։ Մինչդեռ 20—24 տարեկանների խմբերում ընդգրկված յուրաքանչյուր 1000 կնոջ բաժին ընկնող ծնունդը մոտ 2 անգամ գերազանցում էր 25—29, ավելի քան չորս անգամ՝ մինչև 20 և 30—34, 12 անգամ՝ 35—39 և 80—100 անգամ՝ մնացած տարիքային խմբերում ընդգրկված կանանց ծնելիության ցուցանիշները[7]։ Ի դեպ, 1986 թ. ծնվածների ընդհանուր թվակազմում 20—24 տարեկան կանանց բաժին էր ընկնում երեխաների 46,3, 25—29 տարեկաններին՝ ավելի քան 30 %-ը[8]։ Ուստի 1991—1995 թթ. ծնված երեխաների թվաքանակի նվազումը բացատրվում է նաև 20—25 տարեկան կանանց քիչ թվաքանակով, որ սկսվեց 1987 թ.։ Այս գործընթացը կշարունակվի մինչև 1990-ականի կեսերը, այսինքն, պտղաբերության տարիքի կանանց թվակազմի փոփոխությունների հաշվին ծնվող երեխաների բացարձակ թիվը կնվազի։ 1990-ականի կեսերից երևույթը հակառակ ընթացքը կստանա։ Բնակչության վերարտադրության վրա երկրորդ համաշխարհայինի ազդեցությունը ալիքաձև կարտահայտվի դեռևս XXI դ. առաջին քառորդում և ապա աստիճա-

---

3 Նույն տեղում։

4 Итоги Всесоюзной переппси населения 1970 года, т. 2, М., 1972, с. 19, 23, 27, 31, 35, 39, 43, 51, 55, 59, 63, 67, 70, 75.

5 Население СССР 1987, с. 196.

6 Նույն տեղում, էջ 214։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 296։

նաբար կմարի։ Նաև այդ պատճառով հանրապետությունում ծնվող երեխաների բացարձակ թիվը կպակասի։

Ներկա պայմաններում Հայաստանում բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերի, դրանց բնույթի փոփոխության, մի շարք գործոնների ձևավորման ընթացքի վրա մեծ է հանրապետությունում ստեղծված իրավիճակի ազդեցությունը, մասնավորապես Ադրբեջանի կողմից չհայտարարված պատերազմը, անվերջանալի շրջափակումները և այլն։ Ինչպես նկատեցինք, պատերազմը գենոֆոնդի վրա ազդում է ոչ միայն տվյալ պահին, այլև ապագայի առումով։ Մատաղ կյանքի թելը չկտրվելու պայմաններում նրանք դեռ պիտի ծլարձակեին, նոր սերունդներ արարեին, ապահովեին սերնդափոխության անվերջանալի շղթայի բնականոն ընթացքը։ 1991—1992 թթ. դրան զումարվեց խաղաղ ու անոզեն բնակչության ուղղակի կորուստը, փախստական դառնալը, որը շատերին դրդում էր թողնել հայրենի օջախը և բնակություն հաստատել օտար ափերում։ Չէ՞ որ դա նույնպես հանգեցնում է ծննդի նվազմանը։

Հայաստանի բնակչության վերարտադրության վրա իր ազդեցությունը թողեց նաև երկրաշարժը[9]։ Նախ՝ բացասական առումով։ Այն ծննդաբերության վրա ունեցավ երկակի՝ ուղղակի և անուղղակի ազդեցություն։ Ուղղակի, երբ տարերային աղետի պատճառած մարդկային կորուստների (պաշտոնական տվյալներով՝ 25 հազար մարդ) հետ մեկտեղ բացարձակ ծնունդը նվազեց աղետի գոտում ստեղծված սոցիալ-տնտեսական անտանելի պայմանների և բնակչության հոգեբանական ծանր իրավիճակի հետևանքով։ Անուղղակի, երբ երկրաշարժը մի ակնթարթում իր հետ սրբեց ու տարավ, խեղեց և շարքից հանեց մարդկանց՝ բոլոր սերունդներից։ Սերունդներ, որոնց մի մասը ավարտել էր իր նմանին վերարտադրելու սրբազործությունը, սերունդներ, որոնք նոր պիտի ընտանիք կազմեին և պոտենցիալ վերարտադրողներ էին, սերունդներ, որոնք դեռ նոր պիտի ծնվեին։ Դրանով իսկ տարիքային բոլոր խմբերում միանգամից խաթարվեցին սերունդների հաջորդափոխությունն ապահովող շղթայի բաղմաթիվ օղակներ։ Խոսքը պոտենցիալ ծնվողների, դեռևս չծնվածների մասին է։ Ներկայումս խնդիրը այդ շղթան ամբողջականացնելն է, որը մամանակ է պահանջում։

Սակայն երկրաշարժից անմիջապես հետո՝ 1989 թ., Հայաստանում ծնված երեխաների բացարձակ թիվն ավելացավ՝ ծնվեց 75250 երեխա։ Այսինքն, երկրաշարժի հաջորդ տարում (1989 թ.) ծնվեցին 543, իսկ երկրորդ տարում՝ 1990 թ. 4632-ով ավելի շատ երեխաներ, քան ծնվել էին 1988 թ.։

1988 թ. դեկտեմբերյան մեծ աղետը միաժամանակ ազդակ դարձավ իր իսկ հարուցած մարդկային կորուստները փոխհատուցելու համար։ Զարմանալի է, բայց փրողություն, մի այնպիսի իրողություն, որ հաստատվում է անաչառ վիճակագրական հիմնավորված փաստերով։ Ուստի, երկրաշարժը բնակչության վերարտադրության նոր օրինաչափությունների դրսևորման ակիզբ դրեց, ազգը ավելացնելու պոտենցիալ հնարավորությունները կյանքի կոչելու նոր նախադրյալներ ծնեց, որոնք արագացրին ավելի վաղ տարիքում ընտանիք կազմելու գործընթացը, գոյություն ունեցող ընտանիքներում երեխաների թիվն ավելացնելու, այրիացած ընտանիքները նոր հիմունքներով կազմավորելու հույժ կարևոր խնդիրները։

Բացառիկ ծայրահեղ պայմաններում բնակչության ժողովրդագրական նոր վարքը, առաջին հերթին, դրսևորվեց ամուսնության գործակցի բարձրացմամբ։ Մինչև երկրաշարժը ամուսնության գործակիցը (1000 բնակչի հաշվով ամուսնացածներ) ցուցաբերում էր նվազման միտում. 1985 թ. 10,3 պրոմիլից 1988 թ. այն իջել էր 7,8-ի, իսկ 1990 թ.՝ 8,5 պրոմիլ էր[10]։ Ամուսնության գործակիցը նախ բարձրացավ 16—19 տարեկան աղջիկների

---

9 Այդ մասին մանրամասն տե՛ս էկոնոմիկա, 1993, N 3—4, էջ 6—8։

10 Демографический ежегодник, 1991, с. 119.

տարիքային խմբերում։ Վաղ ամուսնությունը հանգեցրեց առաջին երեխայի ավելի վաղ ծննդին։ Ավելացավ ամուսնությունը 20—24 տարեկան աղջիկների և տղաների խմբերում, որը պայմանավորված էր ոչ միայն առաջին, այլև երկրորդ ամուսնությամբ։ Երիտասարդ շատ տղամարդիկ և կանայք կորցրել էին իրենց զույգերին և աղետից որոշ ժամանակ անց կազմեցին նոր ընտանիքներ։

2) Բազում ընտանիքներ կանգնել էին ընտանիքի լրիվ կամ մասնակի կորստի փաստի առջև, կամ երեխաները խեղվել ու դարձել էին հաշմանդամներ։ Նրանց ծնողները պիտի հոգային ընտանիքը նոր անդամներով համալրելու և կորուստը փոխհատուցելու մասին։

Հետաքրքրականն այն է, որ ծննդաբերության և բնակչության բնական ամենաբարձր աճը 1990 թ. գրանցվել է երկրաշարժի էպիկենտրոնում՝ Սպիտակ քաղաքում և Սպիտակի շրջանում։

3) Աղետը ենթագիտակցորեն շարժառիթ դարձավ հանրապետության փոքր ընտանիքներում երեխաների թիվն ավելացնելու համար։ Կանանց նոր վարքագիծ մշակելու հարցում։ Դա դրդեց նաև այն կանանց, ովքեր նույնիսկ ավարտված էին համարում իրենց ընտանիքի վերարտադրությունը։ Այս բոլորը հանգեցրին հանրապետությունում ծննդաբերության մակարդակի բարձրացմանը՝ կանանց բոլոր տարիքային խմբերում։

Ծննդաբերության ընդհանուր մակարդակի նվազման վրա (հատկապես գյուղական բնակավայրերում) մեծապես ազդել է նաև Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթը։ Թեև այդ ընթացքում Ադրբեջանից Հայաստան բռնագաղթեց շուրջ 2,2 անգամ ավելի շատ հայ բնակչություն, քան Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիների թիվն էր, բայց դա բնակչության, մասնավորապես գյուղական շրջանների, բնական աճի վրա որևէ դրական ազդեցություն չգործեց։ Ավելին, Հայաստանի գյուղական բնակավայրերից 1988 թ. արտագաղթած ադրբեջանցիների փոխարեն սահմանամերձ շրջաններում բնակություն հաստատեցին ավելի քիչ բռնագաղթված հայեր (Զանգեզուր, Սևանի ավազանի հյուսիսարևելյան և հանրապետության հյուսիսարևմտյան շրջաններ), բայց հայերը բռնագաղթում էին շատ ավելի ցածր պտղաբերությամբ։ Դա իր հերթին ազդեց ոչ միայն գյուղական վայրերի բնակչության ծնունդաբերության ցուցանիշի, այլև, ինչ-որ չափով, նաև հանրապետության բնակչության ընդհանուր աճի և ընտանիքի մեծության վրա։

Հարկ է նշել, որ վերոհիշյալ կոնտինգենտները որոշակիորեն տարբերվում էին իրենց սոցիալ-ժողովրդագրական նկարագրով։ Օրինակ, Ադրբեջանից բռնագաղթած հայերը քաղաքային բնակավայրերում ապրած, կրթական բարձր մակարդակ ունեցող մարդիկ էին, որոնք ավարտել էին իրենց մասնակցությունը բնական վերարտադրության ընթացքին, մինչդեռ ադրբեջանցիների գերակշռող մասը (90 %-ը) գյուղական բնակավայրերի՝ ցածր կրթական մակարդակով, ավելի երիտասարդ տարիքում գտնվող բնակիչներ էին, որոնք տեղացի հայերի համեմատությամբ բնութագրվում էին պտղաբերության շատ ավելի բարձր ցուցանիշով։

Դեռևս 1960-ական թվականների կեսերից սկսած ծննդաբերության նվազման միտումը պայմանավորված էր նաև սոցիալ-տնտեսական գործոններով։ Այդ գործոնների ազդեցության ներքո Հայաստանում գրեթե բոլոր տարիքային խմբերում իջել են կանանց ծննդաբերության գործակիցները։ Բնակչության տարիքային կազմի փոփոխությունները, որոնք զուտ ժողովրդագրական բնույթի գործոնների հետևանք են, ինչպես նկատեցինք, պտղաբերության տարիքի կանանց համեմատաբար բարենպաստ կազմի դեպքում կարող են հանգեցնել ծննդաբերության ընդհանուր գործակցի բարձրացմանը, մինչդեռ պտղաբերության հատուկ գործակիցները (կանանց տարբեր տարիքային խմբերի մեջ ընդգրկված 1000 կնոջ հաշվով ծնվածները), որ դրսևորել են և այսուհետև ևս կդրսևորեն իջնելու միտում, պայմանավորված են սոցիալ-տնտեսական գործոններով։ Եթե տասնամյակներ առաջ պտղա-

բերության ակտիվ տարիքն ընդգրկում էր 20—39 տարեկան կանանց, ապա այդ ակտիվ տարիքի սահմաններն ատոիճանաբար նեղանալով, հիմնականում ընդգրկում են 20—24, մասամբ 25—29 տարեկաններին։ Եվ իրոք, մինչ նոր սոցիալ-տնտեսական պայմանների և բազմասեփականության հանդես գալը հանրապետությունում բնակչության տարիքային կազմի փոփոխության հետ զուգակցվող խիստ քաղաքակենտրոնացումը (ուրբանիզացիա), վարձու աշխատանքի մեջ ընդգրկվելու համար երիտասարդության դիտելիքների նկատմամբ ներկայացվող պահանջների աճը, կանանց զբաղվածության, բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացումը, երեխաների խնամքի, դաստիարակության, ուսուցման նկատմամբ պահանջների աճը, ընտանիքի բյուջեի կազմավորման գործում կնոջ մասնակցությունը մինչև 1990-ականի սկզբները նպաստել են ընտանիքի փոքրացմանը։ Այդ հարցում, անկասկած, փոքր դեր չեն խաղացել նաև առողջապահության զարգացումը, մահացության, մասնավորապես մանկամահացության կրճատումը, ընտանիքի անդամների թվի ներընտանեկան կարգավորման հնարավորությունները և այլ գործոններ։ Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ բավական երկարատև ժամանակահատվածում՝ 1958—1990 թթ., ծնունդը փոքր ելևէջներով ավելացել է միայն մինչև 24 տարեկան կանանց տարիքային խմբերի մեջ։ Այդ են վկայում հետևյալ տվյալները։

Աղյուսակ 2

Հայաստանում 1000 կնոջ հաշվով ծնված երեխաների թիվը ըստ կանանց տարիքային խմբերի[11]

Տարիքային խմբերը	Տարիները	
	1958—1959	1989—1990
Մինչև 20 տարեկաններ	37,6	79,9
20—24 „	200,6	240,7
25—29 „	264,1	137,3
30—34 „	204,4	74,7
35—39 „	154,9	26,5
40—44 „	68	5,9
45—49 „	16,4	0,4
15—49 „	159,2	95

Սակայն, նոր պայմաններում փոխվել են բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերը և բնույթը, հանդես են եկել մի շարք նոր երևույթներ։ 1991—1994 թթ. բնակչության զարգացման օրինաչափությունների ձևավորման վրա մեծ հետք թողեցին նոր սոցիալ-տնտեսական պայմանները, հատկապես անցումը սեփականության նոր ձևերի, տնտեսավարման նոր մեթոդների և ընդհանրապես «շուկայական թերապիային»։ Այդ ընթացքում թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչության բնական աճի վրա ներազդել են իրար հետ միահյուսված բազմաբնույթ երևույթները, որոնք, հաճախ համանման ազդեցություն ունենալով հանդերձ, տարբերվել են ներգործության աստիճանով, արտահայտվել դրանցից ամեն մեկին բնորոշ առանձնահատկություններով։ Սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող վերափոխությունները կապված են նոր տնտեսական պայմանների, բազմասեփականության, տնտեսության վերարտադրողական կառուց-

[11] Население СССР 1987, с. 214. Демографический ежегодник, 1991, с. 224.

վածքի ձևախախտումների, տնտեսական նոր մեթոդների արմատավորման և, ընդհանրապես, շուկայական հարաբերությունների ներկա ընթացքի հետ, որոնք իրենց հակասական ազդեցությունն են դրսևորել Հայաստանի բնակչության վերարտադրության ողջ ընթացքի, օրինաչափությունների ձևավորման վրա։ Ընտանիքի մեծությունը խթանող որոշ գործոններ ակտիվության նշաններ են դրսևորում (հատկապես գյուղական բնակավայրերում) և, ընդհակառակը, առանձին գործոններ (հատկապես քաղաքներում) ընտանիքի մեծության վրա խիստ բացասաբար են անդրադառնում։

Մինչև 1990-ական թվականների սկզբները հայկական ընտանիքները բավական մեծ էին, շատ էր մեկ կնոջ ունեցած երեխաների թիվը։ Իսկ այսօր ընտանիքը փոքրանում է, պակասում է մեկ կնոջ ծնած երեխաների թիվը։ Բայց գյուղում ծնվող երեխաների հաշվին ընտանիքի փոքրանալը, առանձին դեպքերում, ուղեկցվում է ծնվողների թիվն ավելանալու հետ՝ նվազմանը հաղորդելով միտումի բնույթ։ Դա բացատրվում է 1991—1992 թթ. գյուղում իրականացվող սեփականաշնորհումներով և հողադործությամբ ու անասնապահությամբ զբաղվելու համար տեխնիկական զինվածության ցածր մակարդակով, արտադրված մթերքները տպառման վայրեր առաքելու ասպարեզում վառելիքաէներգետիկ ճգնաժամի հետևանքով ստեղծված բարդություններով և այլ գործոններով։ Դրանք բնակչության աճին նպաստել են և առժամանակ կնպաստեն՝

— խթանելով վաղ ամուսնությունը և ընտանիքի հետագա մեծացումը,
— բարձրացնելով ամուսնության գործակիցը,
— մեղմելով արտագաղթը,
— խրախուսելով ներգաղթը։

Անդրադառնանք 1991—1994 թթ. գյուղում բնակչության վերարտադրության ընթացքի վրա այդ երևույթի ունեցած ազդեցության դերի գնահատմանը։ Հողի սեփականաշնորհումը տեղի ունեցավ գյուղատնտեսական արտադրության մեքենայացման ոչ բարձր մակարդակի պայմաններում։ Ավելին, հողի հապշտապ, ընախապատրաստված և անժամանակ սեփականաշնորհումն ուղեկցվեց նաև մեքենայական պարկի փոշիացմամբ։ Վերջինս սիմվոլիկ գներով նվիրվեց առանձին մարդկանց։ Մեքենազուրկ հողասեփականատերը կանգնեց հողը մշակելու դժվար լուծելի խնդրի առջև։ Գյուղացին թանկ գներով իր ամբողջ հողատարածքը մշակել չի կարող։ Դրան նպաստեց գյուղատնտեսական տեխնիկան ոչ միայն քչերի ձեռքում կենտրոնացնելու կամայական քաղաքականությունը, այլև մեքենայական պարկի ֆիզիկական վիճակը, դրա մաշվածության արագ ընթացքը, պարկը համալրելու անհնարինությունը, պահեստամասերի և վառելիքի անընդհատ սուր բնույթ կրող պակասը, արտադրված գյուղատնտեսական մթերքները իրացման վայրեր առաքելու խորացող բարդությունները և այլն և այլն։ Դրա հետ մեկտեղ, չնչին գներով կոլեկտիվի սեփականություն հանդիսացող գյուղմեքենաների տեր դարձած մարդիկ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար մեծ գումարներ են պահանջում։ Հարկերն ու ռենտան, իրացումը կազմակերպելու հետ կապված ծախսերն ու դժվարությունները ևս գյուղացուց պահանջում են քրտնաջան աշխատանք, մեծ միջոցներ և ժամանակ։

Էքսպենսիվ հիմունքներով գյուղատնտեսությունը վարելու պայմաններում, երբ իշխում է ձեռքի աշխատանքը, ընտանիքին պատկանող հողատարածքն ամբողջությամբ շրջանառության մեջ ընդգրկելը և արտադրված արդյունքներն իրացնելն անհնար է դառնում։ Խստագույնս իջնում է տնտեսության ապրանքային բնույթը, և արտադրված արդյունքները շատ դեպքերում բավարարում են ընտանիքի պահանջները։ Ուստի գյուղում ընտանիքի մեծությունը պայմանավորող գործոններից որոշիչը դառնում է հողի մասնավորեցումը։ Նման պարագաներում գյուղում շատ ընտանիքներ մեծանալու հաշտնի միտում են դրսևորում, բարձրանում է ընտանիքը ապագայում լրացուցիչ աշխատող ձեռքերով համալրելու ձգտումը։ Դա մարդկանց հարկադրում է ընտանիքի մեծությունը գնահատել նոր չափանիշներով, այսինքն,

խրախուսել վաղ ամուսնությունը։ Բայց դա կարող է կարճատև լինել՝ կապված ինտենսիվ հիմունքներով զարգացող ֆերմերային տնտեսությունների առաջացման և գյուղում բնակչության բնեռացման հետագա խորացման հետ։

Երկրորդ, պայմաններ ստեղծել ընտանիքը նոր անդամներով համալրելու համար։ Երիտասարդ ընտանիքներում այսօր ամեն մի նոր անդամի երևան գալը վաղվա աշխատող ձեռքերի համալրման նախապայմանն է։

Երրորդ, նախադրյալ ստեղծել ընտանիքին օրենքով հատկացվելիք հողակտորի չափն հետագայում ավելացնելու համար։ Հոգ չէ, որ այդ հողակտորը չի մշակվի և կմնա չլուրացված։

Չորրորդ, պայմաններ ստեղծել հավելյալ արդյունքի արտադրության չափերն ավելացնելու և գյուղատնտեսական մթերքների ապրանքայնությունը բարձրացնելու համար։

Գյուղում ստեղծված ծանր աշխատանքային, սոցիալական պայմանները, մարդկանց հոգևոր պահանջները բավարարելու դժվարությունները, իրենց հերթին, ավելի ուժգնորեն կներգործեն ծնունդաբերության հետագա աճի ընթացքի վրա։

Քաղաքներում, ի հաշիվ ծնվող երեխաների նվազման, ընտանիքների փոքրանալը շարունակվող ընթացք է։ Դա կապված է քաղաքներում ստեղծված ավելի բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ։ Քաղաքներում ամուսնության «շուկայում» խախտվել է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը։ Փեսացուների մի մասը արտագաղթել է, մի մասը չափազանց զգուշությամբ է մոտենում ընտանիք կազմելու և երեխաներ ունենալու խնդրին՝ հենց նյութական առումով։ Դեր է խաղում նաև քաղաքակրթությունը։ Այդ պատճառով էլ հետաձգվում է ամուսնության միջին տարիքը։ Ի դեպ, նույնիսկ մինչև նոր երևույթները, Հայաստանում առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը բավականին բարձր էր։ 1988—1989 թթ. առաջին անգամ ամուսնացող տղաների միջին տարիքը 26, իսկ աղջիկներինը՝ 23 էր[12]։ Ուստի ծագում է ամուսնության տարիք թևակոխող երիտասարդության նկատմամբ ժողովրդագրական քաղաքականության հիմունքների դիտական մշակման և կիրառման խնդիրը։

Հանրապետությունում բնակչության բնական աճի տեմպերի նվազման, նրա բնույթների վրա ազդող մյուս գործոնը կապված է ինչպես մահացողների բացարձակ թիվն ավելանալու, այնպես էլ մահացության գործակիցները նկատելիորեն բարձրանալու հետ։ Հարկավոր է այն էլ նկատել, որ մինչև 1970 թ. մահացությունն անընդհատ կրճատվում էր, դրանով իսկ դառնալով բնակչության բնական աճի ցուցանիշի բարձրացման կարևոր պայման։ Սակայն 1970-ականի կեսերից մահացության ընդհանուր գործակիցը թեև դանդաղ, բայց բարձրանալու միտում է դրսևորում։ Մահացության ընդհանուր գործակիցը 1970 թ. 5,1 պրոմիլից 1990 թ. բարձրացավ և կազմեց 6,0, իսկ 1993 թ.՝ 7,5 պրոմիլ[13]։ Այդուհանդերձ, 1990 թ. սկսած մինչև օրս Հայաստանը բնութագրվում էր աշխարհում ամենացածր մահացությամբ։ Նման երևույթը հիմնականում պայմանավորված էր հանրապետության բնակչության տարիքային կառուցվածքով և բուժսպասարկման համեմատաբար լավ մակարդակով։ Բանն այն է, որ մինչև 1980-ականի վերջերը հանրապետության բնակչության թվակազմում «ծեր» բնակչությունը զգալիորեն ցածր էր Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական երկրների և ԽՍՀՄ-ի եվրոպական մասի հանրապետությունների համեմատությամբ։ Այդ պատճառով էլ, այդ երկրներում մահացության ընդհանուր գործակիցը (1000 բնակչի հաշվով) կազմում է 9—13 մարդ, այն դեպքում, երբ այդ երկրները բնութա-

---

12 Демографический ежегодник, 1991, с. 210.

13 Նույն տեղում, էջ 62, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993—1994, էջ 14։

գրվում են ցածր մանկամահացությամբ[14]։ Մինչդեռ զարգացող երկրներում բարձր մահացությունն առաջին հերթին պայմանավորված է մանկամահացության բարձր գործակցով, քանի որ նրանցում «ծեր» բնակչությունը շատ ավելի քիչ տոկոս է կազմում, քան Հայաստանում։ Բայց, ի տարբերություն վերջիններիս, Հայաստանը բնութագրվում է մի քանի անգամ ավելի ցածր մանկամահացությամբ, թեև զարգացած կապիտալիստական երկրների համապատասխան ցուցանիշը գերազանցում է մի քանի անգամ։ 1980—1990 թթ. Հայաստանում մահացության ընդհանուր գործակիցը բարձրանալու պայմաններում յուրաքանչյուր 1000 ծնված երեխայի հաշվով մինչև մեկ տարեկան դառնալը 1980 թ. մահացել է 26,2, 1985 թ.՝ 24,8, իսկ 1990 թ.՝ 18,6 երեխա։ Համեմատության համար նկատենք, որ դա միջինասիական հանրապետությունների, Ղազախստանի և Ադրբեջանի համապատասխան ցուցանիշից չափազանց ցածր թիվ է։ Բայց ԽՍՀՄ մյուս հանրապետությունների համեմատ (բացառությամբ Մոլդովայի) այդ գործակիցը բավականին բարձր է։ Մինչև մեկ տարեկան երեխաների ամենացածր մահացությունը 1986 թ. եղել է Ճապոնիայում։ Այստեղ ծնված յուրաքանչյուր 1000 երեխայից մինչև մեկ տարեկան դառնալը մահացել է 5 երեխա, Շվեդիայում՝ 6, Շվեյցարիայում՝ 7, Նիդեռլանդներում, Ֆրանսիայում, ԳԴՀ-ում և ԳՖՀ-ում՝ 9 երեխա[15]։

Հայաստանում բնակչության մահացության ատպարեզում գործել է այն օրինաչափությունը, որ տարիքային խմբերի ծայրաբևեռից մեկում մահացության գործակցի նվազումը կանխորոշել է նրա բարձրանալը մյուս ծայրաթևում։

Ցածր մահացության շնորհիվ ծնվողների հաշվով ապասվելիք կյանքի տևողությամբ Հայաստանը ԽՍՀՄ-ում 1986—1987 թթ. բնութագրվում էր ամենաբարձր ցուցանիշներով։ ԽՍՀՄ-ում միջին հաշվով այն կազմում էր 69,8 (տղամարդկանը՝ 65, կանանցը՝ 73,8) տարի[16]։ ՀԽՍՀ-ում 73,9 տարի էր (տղամարդկանցը՝ 71, կանանցը՝ 76,2)[17]։

Վերջին տարիների ընթացքում հանրապետությունում բնակչության մահացության բարձրանալու միտումը պայմանավորված է հիմնականում երեք խումբ գործոններով՝ 1) սոցիալ-տնտեսական, 2) քաղաքական, 3) ժողովրդագրական (այդ թվում միգրացիոն)։ Առաջին և երկրորդ խումբ գործոններն իրենց դրսևորումը գտնում են կյանքի պայմանների վատացման, իսկ երրորդը՝ բնակչության տարիքային կազմի փոփոխությունների, ՀՀ ժողովրդագրական զարգացման ընթացքում հասուն և ծեր տարիքի բնակչության բաժնի ամրապնդման մեջ։ Այսպես, եթե 1979 թ. հետաշխատանքային տարիքի անձանց (60 և ավելի տարեկան տղամարդիկ և 55 և ավելի տարեկան կանայք) բաժին էր ընկնում հանրապետության ողջ բնակչության 9,3 տոկոսը, ապա 1992 թ.՝ արդեն 13 տոկոսը։ Այդ բոլորով հանդերձ, մանուկների մահացության բացարձակ թվի կրճատումը, ցավոր, կենսապայմանների և ծառայությունների բարելավման արդյունք չէ։ Այն, նախ, բացատրվում է բացարձակ ծնունդի կտրուկ նվազումով։ Երկրորդ, դրանց մի մասը մահանում է հանրապետության սահմաններից դուրս և տեղում վիճակագրական հաշվառման չի ենթարկվում։ Այսինքն, այդ թվերը մանկամահացության իրական պատկերը չեն արտահայտում։

Ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ Հայաստանում բնական աճի գործոնների հետ միասին նրա վերարտադրողական վարքա-

---

14 Народное хозяйство СССР в 1988 г., статистический ежегодник, М., 1989, с. 659.

15 Նույն տեղում։

16 Население СССР 1987, с. 351.

17 Հայաստանը թվերում 1990 թվականին, վիճակագրական համառոտ ժողովածու, Երևան, 1990, էջ 22։

գծի վրա դրական կամ բացասական առումով էական ազդեցություն են դրոշմել միջպետական միգրացիոն գործընթացները՝ ներազդելով ծննդի և մահվան ցուցանիշների ձևավորման վրա։ Յուրաքանչյուր անգամ այն պայմանավորված է եղել տարածաշրջանում բնակչության նկատմամբ միդրանտների վերարտադրողական վարքագծի դրսևորումներով, զանգվածայնությամբ, սեռատարիքային կազմով, հոսքերի ուղղվածությամբ, սոցիալ-տնտեսական պայմաններով և այլ պարագաներով։

Մինչև 1988 թ. Հայաստանում բնակչության միջպետական միգրացիոն գործընթացները հիմնականում դրսևորվել են սոցիալ-տնտեսական, մասամբ նաև ազգային, էթնիկական պատկանելության շարժառիթներով։ 1988 թ. սկսած, որոշիչ են դառնում ազգամիջյան հարաբերությունները, որոնք իրենց սուր արտահայտվածությունը ստացան խորհրդային համակարգի փլուզման տարիներին և փլուզումից հետո։ Համակարգի անկման տարիներին Հայաստանի բնակչության թիվը փխոտ ավելացավ Ադրբեջանից բռնադաղթած հայ բնակչության հաշվին։ Համակարգի փլուզումից մեկ-երկու տարի անց Հայաստանում ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրավիճակը հանգեցրեց հանրապետությունից դեպի կապիտալիստական զարգացած և ԱՊՀ երկրներ փախստականների, քիչ անց՝ մշտական բնակչության հոծ զանգվածների հեռանալուն։

Թերասնումից, լույսի բացակայությունից, անգործությունից, ցրտից, ցածր վատտակից, նվազագույն ապրուստն ապահովելու հետ կապված անհաղթահարելի և անվերջանալի դժվարություններից փրկվելու ելքը շատերը տեսնում են արտագաղթի, օտար ափերում գործ որոնելու, ջանադիր աշխատանքով հաց վաստակելու համար զբաղմունքի տեր դառնալու մեջ։ Տեղաշարժվում են բոլոր նրանք, ովքեր այլ երկրներում հաց վաստակելու և ընտանիքը պատսպարելու թեկուզ և շատ ընչին հույս են տածում կամ նույնիսկ այդ հույսն էլ չունեն։ Նախկինում ամառանը մեկնում էին ամառանոցներ, այժմ մեկնում են ժամառանոցներ։ Տասնյակ հազարավոր ընտանիքներ ձմռան ընթացքում խարիսխ են գցում Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, Հյուսիսային Կովկասում, Կենտրոնական Ռուսաստանում, Ուրալում, Բելոռուսում և ուր պատահի։ Հազարավորներ վերջնականապես հաստատվել են ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում։ Դրանց մեջ 1990—1991 թթ. մեծ տոկոս էին կազմում Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականները, որոնց մեծ մասը դեռ Հայաստանում գրանցված չէր, իսկ 1992—1994 թթ. արտագաղթում էր մշտական բնակչությունը։

Երևույթը որոշակի վտանգ է սպառնում հանրապետության բնակչության գենոֆոնդին ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի առումով։ Ուղղակի, երբ արտագաղթի հետևանքով պակասում է բնակչությունը։ Անուղղակի, երբ դրան է գումարվում բնական աճի նվազումը, քանզի երեխաները ծնվում են այլ երկրներում։ Ըստ որում, միգրացիայի ամեն մի տեսակ հող է նախապատրաստում անվերադարձ միգրացիայի համար։ Դրա հետ մեկտեղ արտագաղթածները ազգային եկամուտն արարում են ոչ թե մայր հայրենիքում, այլ նրա սահմաններից դուրս, իրենց ստեղծածով սատար չկանգնելով հարազատ ժողովրդի գոյատևման և սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին, էկոնոմիկայի հետագա վերելքին։ Հասարակությունը մասամբ արտադրողից վերածվում է սպառողի։

Եվ բանն էլ այն է, որ արտագաղթողների մեծ մասը հայրենիքում չի բնակվում, բայց եր զրանցումը պահպանում է մշտական բնակավայրում։ Գաղտնիք չէ, որ հանրապետության բնակչության մի զգալի մասի գոյատևության աղբյուրը օտար ափերում գեգերողների՝ դժվարությամբ ձեռք բերած միջոցներն են։

Մինչդեռ հանրապետության վիճակագրական մարմինները ստույգ տվյալներ չունեն մերձավոր և հեռավոր երկրներ արտագաղթած բնակչության բացարձակ թվի մասին։ Այդ թիվը սահմանափակվում է գրանցումից դուրս եկողների և գրանցվողների տվյալներով։ Իրականում բնակչության

մի վիթխարի զանգված թեև զրանցված է հանրապետությունում, բայց ընակվում է նրա սահմաններից դուրս։ Այանքը շարունակվում է, դրսում ծնվում են երեխաներ, նրանք ևս Հայաստանում զրանցվածների մի մասը իրենց մահկանացուն կնքում են այնտեղ։ Այդ պատճառով էլ եթե մինչև 1990-ական թվականները բնակչության բնական աճի ելևէջները մեծապես պայմանավորվել են մի շարք այլ գործոններով, ապա 1991—1994 թթ. նրա աճի ընթացքի վրա շափազանց աչդու են դառնում նաև արտագաղթի շմարող ալիքները, քանի որ արտագաղթողների մեծ մասը երիտասարդություն է՝ բնակչությունը վերարտադրող սերունդը։ 1994 թ. ծնվեցին շուրջ 30 հազարով ավելի քիչ երեխաներ, քան 1986 կամ 1990 թվականներին։ Դա երևում է ներքոհիշյալ աղյուսակի տվյալներից։

Աղյուսակ 3

Հայաստանի բնակչության ծնվածների և մահացածների բացարձակ թիվը (հազ. մարդ) 1980—1994 թթ.[18]

Թվականներ	Ծնվածներ	Մահացածներ
1980	70,3	17,1
1985	80,3	19,6
1986	81,2	19,7
1987	78,5	20,0
1988	74,7	35.6
1989	75,3	22,0
1990	79,9	2,0
1991	77,8	23,4
1992	70,6	25,8
1993	59,0	27,5
1994	51,2	24,6

1993—1994 թթ. ծնվածների բացարձակ տվյալները իրական պատկերը ճիշտ են արտահայտում։ Ինչ վերաբերում է բնակչության 1000 շնչի հաշվով ծնվածների և մահացության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալներին, ապա դրանք հիմնված են սխալ ելակետային սկզբունքների վրա, որի արդյունքում ծննդաբերության և մահացության ցուցանիշները մեխանիկորեն նվազում են։ Իրականում այդ գործակիցները պետք է հաշվարկել Հայաստանում մշտական գրանցում ունեցող բնակչությունից միգրացիայի մեջ գտնվողներին բացառելու միջոցով, քանի որ դրանց ծնունդն ու մահը երկրի վիճակագրական տվյալներում չեն արտահայտվում։ Ուստի, խնդիրը 1991—1994 թթ. հանրապետությունից արտագաղթած բնակչության մոտավոր թվակազմն ունենալն է։ Այդ մասին պատկերացում կազմելու համար պետք է օգտվել անուղղակի տվյալներից։ Ցավոք, նման տվյալները բացակայում են։ Մանք այդ նպատակով առաջարկում են, օրինակ, հիմք ընդունել բնակչությանը բաժանվող մթերքների կտրոնները։ Բայց բոլորին էլ պարզ է, որ արտագաղթողների մի մասը նույնպես կտրոններ են ստանում։ Դրանք օգտագործում են ընտանիքի այստեղ գտնվող մյուս անդամները, հարևանները, այլ հարազատներ, բարեկամներ։ Մանք արտագաղթողների թվի մեծությունը հիմնավորելու համար վկայակոչում են

[18] Население СССР 1987, с. 296; Демографический ежегодник 1991, с. 66; Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993—1994, էջ 14։

1994—1995 թթ. վաուչերներ ստացողների թիվը։ Բայց դա նույնպես այն չէ, որ «հալած յուղի» տեղ ընդունվի։ Վաուչերներ սաացողների մեջ նույնպես կան մարդիկ, որոնք բացակայում են հանրապետությունից, եղան կրկնակի վաուչերներ ստացողներ (բռնադատվածները և նրանց ընտանիքների անդամները)։

1991—1994 թթ. հանրապետությունից արտագաղթած բնակչության հավանական թիվը ստանալու համար, հավանաբար, պարտի է օգտվել մի շարք վարկածներից։ Դրա համար կարող է հիմք ծառայել 1990 և 1994 թթ. ծնված երեխաների թվի տարբերությունը, որը, ինչպես հիշատակվեց, կազմում է մոտ 30 հազ. երեխա։ Հարց է ծագում, ինչքա՞ն բնակչություն կարող էր ապահովել այդ 30 հազար երեխաների ծնունդը։ Մանրակրկիտ հաշվարկներով հիմնավորվում է վերը թվարկված բոլոր դրդապատճառների գործունեության ազդեցությունը ծննդաբերության և մահացության ցուցանիշների վրա։ Նկատի է առնվել այն, որ այդ գործոնները որոշ չափով չեղոքացրել են միմյանց։ Ի հետևանս դրա, 1990 թ. համեմատությամբ 1994 թ. պետք է ծնվեին 13—14 հազարով ավելի քիչ երեխաներ։ Այսինքն՝ 1994 թ. հանրապետությունում 3753 հազ. բնակչության առկայության պայմաններում պետք է ծնվեին ոչ թե 51,2 հազ., այլ 67—68 հազ. երեխաներ։ Տարբերությունը կազմում է 16—17 հազար երեխա, որոնք էլ հենց դաժին են ընկնում միգրացիայի մեջ գտնվող բնակչությանը։

Արդի պայմաններում ինչքա՞ն բնակչություն կարող էր ապահովել այդ 16—17 հազ. երեխաների ծնունդը։

Այդ նպատակով օգտվենք հետևյալ վարկածներից. Վարկած առաջին. 16 հազարով ավելի շատ երեխաների ծննդի դեպքում Հայաստանից արտագաղթած բնակչության թիվը մեր հաշվարկներով կկազմի շուրջ 900 հազ. մարդ։

— 17 հազարով ավելի շատ ծնված երեխաների դեպքում արտագաղթած բնակչության թիվը կկազմի շուրջ 945 հազ. մարդ։

Այս չափաղանց մոտավոր վարկածի առաջին պայմանի դեպքում Հայաստանի առկա բնակչությունը կկազմի 2863 հազ., երկրորդ պայմանի դեպքում՝ 2808 հազ. մարդ։ Երկու պայմանների հաշվարկումից ստացվող միջինը հավասարվում է ավելի քան 2835 հազ. մարդու, որը, հավանաբար, շատ մոտ է իրականությանը։

Տվյալ մեծությունների առկայության պայմաններում ծննդաբերության ընդհանուր գործակիցը 51200 : 2835000×1000=18 (1986 թ. 25-ի և 1990 թ. 24 պրոմիլի դիմաց), մահացության գործակիցը՝ մոտ 8,4 պրոմիլ։ Մինչդեռ պաշտոնական վիճակագրությունը 1994 թ. ծննդաբերության ընդհանուր գործակիցը ներկայացնում է 13,7, իսկ մահացությանը՝ 6,6 պրոմիլով։

Վարկած երկրորդ. ընդունենք, որ զանգվածային արտագաղթի բացակայության պայմաններում 1994 թ. Հայաստանի բնակչությունը, ինչպես նեբկայացնում է վիճվարչությունը, կազմում է 3753 հազ. մարդ։

Նախորդ վարկածի պայմանի համաձայն, դարձյալ նկատի առնելով բնակչության ծննդաբերության միտումները, 1994 թ. ծնված երեխաների թիվը կարող է հավասար լինել. ա) 51200+16000=67200-ի։ բ) 51200+ +17000−68200-ի։

Նման պարագաներում՝ ա) 51200-ը՝ կկազմի 67200-ի 76,2 %-ը, իսկ 3753 հազ. բնակչության 76,2 %-ը կկազմի 2859,8 հազ. մարդ։ բ) 51200-ը կկազմի 68200-ի 75,1 %-ը, 3753 հազ. բնակչության 75,1 %-ը հավասար է 2818,5 հազ. մարդու։

Այսպիսով, այս վարկածի տրամաբանությամբ Հայաստանից արտագաղթած բնակչության թիվը մի պայմանի դեպքում կկազմի 893,2 հազ., իսկ մյուս պայմանի դեպքում՝ 934,5 հազ. մարդ։ Առաջին պայմանի դեպքում ծննդաբերության ընդհանուր գործակիցը հավասար կլինի 17,9, մահացության գործակիցը՝ 8,3 մարդու։ Երկրորդ պայմանի դեպքում այդ ցուցանիշները համապատասխանաբար կկազմեն 18,2 և 8,5 մարդ։

Ինչպես նկատում ենք, այդ վարկածները ենթադրում են միմյանց չափազանց մոտ ուվյալներ։ Այսինքն՝ Հայաստանից արտագաղթող բնակչությունը կազմում է 1 մլն. մարդուց մի փոքր պակաս։ Այդ է վկայում նաև ՀՀ նախագահի 1996 թ. ընտրության մասնակիցների քիչ թիվը։

Ինչ վերաբերում է մահացածների ընդհանուր թվին, ապա հանրապետության սահմաններից դուրս մահացածները, որոնք Հայաստանի մշտական բնակիչներն են, ի վերջո, պետք է գրանցումից դուրս գրվեն։ Բացառություն են կազմում այն երեխաները, որոնք ծնվել և մահացել են Հայաստանի սահմաններից դուրս, թեև նրանց ծնողները Հայաստանի քաղաքացիներ են։

Հայաստանում բավական ցածր ցուցանիշով է բնութագրվում նաև մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը։ Տվյալ դեպքում որոշակի աղդեցություն է ունենում այն, որ Հայաստանում ծնված և մինչև մեկ տարեկան դառնալը արտագաղթած երեխաների որոշ մասն իր մահկանացուն կնքում է ծննդավայրից դուրս գտնվող երկրներում։

Արդուհանդերձ, այն, որ ըստ պաշտոնական տվյալների, միայն երեքչորս տարվա ընթացքում բնակչության բնական աճը նվազել է ավելի քան կրկնակի (1990 թ. բնակչության 10 հազար շնչի հաշվով այն կազմում էր 174, իսկ 1994 թ.՝ ընդամենը 71 մարդ), այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում ավելի քան 3 անգամ, համապատասխանաբար՝ 155 և 50 մարդ, վկայում է Հայաստանի բնակչության, այն էլ երիտասարդության մի մեծ մասի արտագաղթի մասին։ Դա որոշակի որակ է, անկախ այն բանից, արտագաղթել է 500 հազա՞ր, թե՞ մեկ միլիոն մարդ։

Բնակչության բնական աճի վրա որոշակի ազդեցություն են դրոշմել նաև ներպետական միգրացիաները, քանի որ կտրուկ փոխվել են դրանց ուղղությունները, զանգվածայնության չափերը և ընթացքը։ Դա, անկասկած, դրական երևույթ է։ Ի չիք դարձավ գյուղի հաշվին տասնամյակներ շարունակ քաղաքային բնակավայրերում բնակչության անհարկի ավելացումը։ Գործընթացն ուղեկցվեց քաղաքային բնակավայրերից գյուղեր արտագաղթողների թվի ավելացմամբ։ Երևույթը, անկասկած, ժամանակավոր բնույթ է կրելու, որը կապված է գյուղում սեփականաշնորհման գործընթացի ավարտի և, թերևս, նաև քաղաքներում ներկա սոցիալ-տնտեսական ավելի լարված իրավիճակի հավանական մեղմացման հետ։ Արդուհանդերձ, առաջիկայում գյուղական բնակչության միգրացիան դեպի հանրապետության քաղաքները չի ակտիվանա. բացակայում է աշխատանքի ասպարեզը, բնակարանով ապահովելն անհնար է։ 1980-ականի վերջերից և՛ աշխատանքով, և՛ բնակարանով ապահովելու երաշխիքը գրեթե լրիվ չափով մղվեց հետին պլան, իսկ 1990-ականի սկզբներից իսպառ բացառվեց։ Հողի սեփականաշնորհումը դարձել է օբյեկտիվ գործոն՝ գյուղական բնակչության միգրացիան դեպի քաղաքներ (այդ թվում՝ գյուղից գյուղ) մեղմացնելու հարցում։

Միաժամանակ, կյանք է մտնում նաև գյուղից միգրացիան թուլացնող այնպիսի գործոն, ինչպիսին քաղաքաշինությունն է։ Քաղաքներում կսրվեն ներկայումս գոյություն ունեցող մի շարք խնդիրներ. դա վերաբերում է քաղաքներում բնակարանային ապահովվածությանը, էներգիայի, վառելիքի, ջրի շուրջօրյա պահանջների բավարարմանը, ջեռուցման ու հիգիենիկ համակարգին, գյուղատնտեսական մթերքներով քաղաքային բնակչության կարիքները բավարարելու և այլ խնդիրներին։ Սակայն, ժամանակի ընթացքում գյուղատնտեսական արտադրության ինտենսիվ զարգացումը և գյուղում աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության թվաքանակի աճը կհանգեցնեն գյուղում հարաբերական գերբնակչության գոյացմանը, և վերստին կաշխուժանա դեպի քաղաքներ բնակչության միգրացիան, և գյուղը նորից կդառնա արտագաղթի աղբյուր։

Ելնելով ժողովրդագրության ասպարեզում ստեղծված առկա իրավիճակից՝ նպատակահարմար է առաջիկա 15—20 տարիների ընթացքում, օրենսդրական հիմունքներով, կենտրոնացված միջոցների հաշվին ժողովրդագրական քաղաքականությունն իրականացնել հետևյալ ուղղություններով. 1. Վար-

ռու աշխատանքի բոլոր բնագավառներում տղամարդկանց համեմատությամբ կանանց հստակ սահմանել օրական մեկ ժամ տևողությամբ ավելի կարճ աշխատանքային օր։ 2. Հանրապետությունում հետծննդյան շրջանում կանանց համար սահմանել երեք ամսի տևողությամբ վճարովի արձակուրդ՝ անկախ երեխայի համար վճարվող նպաստի չափերից։

Սահմանամերձ գոտու՝ Ադրբեջանին և Իրանին սահմանակից ու քաղաքային բնակավայրերում բնակվող կանանց համար հետծննդյան շրջանում սահմանել հանրապետական համեմատ մեկ տարով ավելի երկար տևողությամբ վճարովի ֆիզիոլոգիական արձակուրդ և 1,5 անգամ ավելի բարձր վճար (անկախ երեխայի համար վճարվող նպաստից, իսկ Ադրբեջանին և Իրանին սահմանակից սահմանամերձ քաղաքներում և Վրաստանին ու Թուրքիային սահմանակից գնակավայրերում (բացառությամբ Արարատյան հարթավայրի) բնակվող կանանց համար մեկ տարով ավելի, բայց առանց բարձրացված գործակցի։ 3. Հետծննդյան շրջանում, օրենսդրական հիմունքներով սահմանված ֆիզիոլոգիական արձակուրդի ընթացքում վարձու աշխատանքը շարունակելու ցանկություն ունեցող կանանց յուրով աշխատավարձը պահպանելու հետ միասին շարունակել վճարել նաև վերը հիշատակվող նպաստը։ Յուրաքանչյուր երեխայի ծնունդից հետո վարձու աշխատանքը շարունակելու ցանկություն չունեցող կանանց աշխատանքային ստաժը համարել շարունակվող չորս, իսկ սահմանամերձ շրջաններում (բացառությամբ Արարատյան հարթավայրի) հինգ տարի ժամանակով։

4. Մինչև չափահաս դառնալը ծնված ամեն մի երեխայի նպաստի նվազագույն չափը սահմանելիս ելնել ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտը պաշտոնապես ընդունված սպրուստի նվազագույն սահմանի վրա պահելու սկզբունքից։ Սահմանամերձ շրջաններում (բացառությամբ Արարատյան հարթավայրի) այդ նպաստի չափերը հանրապետականի միջինի համեմատությամբ ավելացնել 1,5—2 անգամ՝ նայած ծնվածների հաջորդականությանը։ 5. Ընտանիքներում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ ծնված երեխայի նպաստը սահմանել 40—50 %-ով աճող գործակիցներով ավելի բարձր չափ, քան սահմանված է նախորդ երկու երեխաների համար*։

Սահմանամերձ գոտիներում ընդունել 2—2,5 անգամ ավելի բարձր չափ՝ ծնվող երեխաների հաջորդականությանը համապատասխան աճող գործակիցներով։ 6. Հանրապետությունում յուրաքանչյուր նորածնի հատկացվող միանվագ նպաստի չափերն ավելացնել և ընտանիքում ծնվող առաջին երեխայի համար սահմանել 5—6, հաջորդ երեխայի համար 1,5-ով ավելի բարձր նվազագույն աշխատավարձի չափ, իսկ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ ծնվող երեխայի համար նպաստը բարձրացնել 30—50 %-ով, աճող գործակիցներով։

Սահմանամերձ գոտիներում (բացառությամբ Արարատյան հարթավայրի) հանրապետության միջինի նկատմամբ 1,5—2 անգամ բարձրացնել յուրաքանչյուր նոր ծնված երեխային հատկացվող միանվագ նպաստի չափերը՝ համապատասխանաբար պահպանելով նույն մոտեցումը երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար։ 7. Մինչև երեխայի չափահաս դառնալը հանրապետական միջին մակարդակի համեմատ երեք անգամ ավելացնել պատերազմի հետևանքով ծնողներից զրկված, միայն մեկ ծնող ունեցող և հաշմանդամ դարձած մարդկանց երեխաների նպաստի չափերը։ 8. Ադրբեջանին և Իրանին սահմանակից բնակավայրերում մինչև 16 տարեկան երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին արտոնել 5 տարի, իսկ Թուրքիային (բացառությամբ Արարատյան հարթավայրի) և Վրաստանին սահմանակից բնակավայրերում՝ չորս տարի ժամանակով զեղչված եկամտահարկ և ոչնտավճար մուծելու իրավունք։ 9. Ծովի մակերևույթից 1500 մետրից ավելի բարձրություններում բնակվող կանանց յուրաքանչյուր երե-

* Երրորդ և հաջորդ երեխաներն ունեցողները ծնողարերող կանանց ընդհանուր թվի միայն 20—25 %-ն են կազմում։

իայի համար սահմանված նպաստի չափերն ավելացնել 45—50 %-ով (խոսքը վերաբերում է ինչպես ֆիզիոլոգիական արձակուրդի, այնպես էլ միանվագ նպաստի չափերին)։ Այն տարբերակել ըստ ծնվող երեխաների հաջորդականության, յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդի համար նպաստ ավելացնել աճող գործակիցներով և բնակավայրի գոտիականության՝ 1501 մետրից սկսած յուրաքանչյուր 200 մ բարձրության համար նպաստի չափերն ավելացնել 15—20 %-ով։ 10. Ծովի մակերևույթից 1700 մետրից ավելի բարձրություններում բնակվող երեք և ավելի երեխա ունեցող կանանց թոշակի իրավունք արտոնել 45—50 տարեկանում, տարբերակման հիմքում դնելով երեխաների թիվը, աղետի և սահմանամերձ գոտիներում բնակությունը։ 11. Նախկինում վարձու աշխատանքներում ընդգրկված կանանց կենսաթոշակի նվազագույն չափը սահմանել երկու անգամ ավելի բարձր գործակիցներով, քան վարձու աշխատանքներում երբևիցե չընդգրկվածներինը։ 12. Վարձու աշխատանքի կարգավիճակին հավասարեցնել երեք և ավելի երեխաներ ունեցող մայրերին, երեխաների թվին համապատասխան ավելացնել կենսաթոշակը՝ աճող գործակիցներով։ 13. Հատկապես աղետի և սահմանամերձ գոտիներում նոր կազմավորվող ընտանիքներին պետական հողային ֆոնդից հատկացնել հողաբաժին, ինչպես նաև տնամերձ հողամաս, բնակարանաշինության համար տրամադրել համապատասխան վարկ և շինանյութ ավելի արտոնյալ պայմաններով։ 14. Սահմանամերձ գոտիներում անհատական բնակարանային շինարարություն իրականացնող ընտանիքներին տրամադրել վարկ՝ աղետի գոտու համար սահմանված պայմաններով։ Վարկի մարման ժամկետությունը երկարացնել, իսկ տոկոսադրույքը նվազեցնել յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդի կապակցությամբ նվազող գործակիցներով։ 15. Լեռնային շրջաններում և սահմանամերձ գոտիներում, ինչպես նաև այլ վայրերում փախստականներից գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող ընտանիքներին հարկային քաղաքականությամբ արտոնել զեղչված չափերով ռենտավճար և եկամտահարկ վճարելու իրավունք։ Նպատակային վարկ հատկացնելիս՝ նվազեցնել մարման տոկոսադրույքը, երկարացնել ժամկետները՝ նկատի առնելով ամեն անգամ նոր երեխայի ծնունդը։ 16. Հեռանկարում հանրապետության բնակչության մահացության մակարդակը հիմնականում կախված կլինի նրա բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումից։ Վերջինիս տակ պետք է հասկանալ ոչ միայն արտաքին և ներքին գլոբալ գործոնների բացասական ազդեցության կասեցումը, այլ նաև զուտ սոցիալական բնույթի հեռավոր խնդիրների մասնակի լուծումը.

ա) բնակչության բժշկական սպասարկման նոր, առաջադիմական, այդ թվում՝ մասնավոր, խառը, պետական ձևերի համալիր արմատավորման խթանումը, բ) բժշկական գիտության հատկացվող միջոցների ավելացումը, գ) առողջապահության ցանցի տարածքային կառավարման կատարելագործումը, դ) կադրերի որակավորման բարձրացումը և այլն։

17. Մանկամահացությունը կրճատելու նպատակով խստորեն մտահոգվել հղի, ծննդաբերող կանանց և երեխաներին սպասարկող առողջապահական հաստատությունների ցանցի վերականգնման և կարգավորման հարցերով։ Մինչև 15 տարեկան երեխաներին, կարիքի դեպքում, ապահովել ձրի դեղամիջոցներով։ 18. Սահմանամերձ և աղետի գոտիներում իրականացնել առողջապահության համար նախատեսվող ֆինանսական ռեսուրսների, առողջապահության օբյեկտների և բժշկական կադրերի ռացիոնալ տեղաբաշխումն ու վերաբաշխումը։ 19. Հետծննդյան շրջանում երեք տարի վճարովի արձակուրդ և մինչև հինգ տարի աշխատանքային ստաժը պահպանելու պայմաններում մանկամսուրներում, ներառյալ մինչև երեք և չորս տարեկան երեխաների ընդգրկվածությունը պակասեցնելու հաշվին, բարելավել սպասարկման մակարդակը, պետության հաշվին ավելացնել մանկապարտեզներին հատկացվող միջոցները։ Դա թելադրվում է ավելի առողջ և

ամրակաղմ երեխաներ մեծացնելու անհրաժեշտությամբ։ 20. Պետական բյուջեի չարվածության պայմաններում մայրության և մանկության պաշտպանությանը սատար կարող են կանգնել արհմիությունները, ինչպես նաև վարձու աշխատանքի բոլոր օղակները։ Խնդիրը վերաբերում է արտադրական օղակներում՝ շահույթներից, բյուջետային հիմնարկներում՝ աշխատավարձի ֆոնդից տնտեսած գումարների հաշվին հատուկ ֆոնդերի ստեղծմանը և դրանց նպատակային իրացմանը։ 21. Ժողովրդագրական քաղաքականության իրականացմանը կարող են իրենց նպաստը բերել նաև ձեռներեց մարդիկ, բաժնետիրական ընկերությունները, բանկերը, առևտրական օբյեկտները, ստեղծագործական միավորումները, եկեղեցին, հանրապետությունում գործող զանազան ընկերություններն ու կազմակերպությունները։ Այդ նպատակով, հանրապետությունում կարելի է ստեղծել հատուկ «մայրության հիմնադրամ», խրախուսել ծնունդը, սատար կանգնել մայրերին։

ЗАКОНОМЕРНОСТИ РАЗВИТИЯ НАСЕЛЕНИЯ РА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Академик НАН РА В. Е. ХОДЖАБЕКЯН

Резюме

В Армении сложилась чрезвычайно сложная ситуация, связанная с воспроизводством населения, грозящая генофонду нации. В период с 1991—1995 гг. резко ухудшились показатели естественного прироста населения. Эмиграция приняла колоссальные размеры. Подобные нежелательные явления объясняются рядом причин объективного и субъективного характера: демографическими последствиями второй мировой, сложившейся в республике военно-политической ситуацией, эмиграцией азербайджанцев, землетрясением 7 декабря 1988 г.; сложным экономическим и социальным положением, небывалым ростом безработицы, миграцией населения, безудержным ростом цен, практически невозможностью обеспечения прожиточного минимума и многочисленными другими причинами, сопутствующими экономическому хаосу.

С помощью особого методического подхода можно попытаться определить численность эмигрирующего из Армении населения, в результате чего отрицательное сальдо миграции населения из Армении исчисляется 1 млн. чел. Вследствие уточнения показателей естественного прироста населения общие показатели рождаемости и смертности (в расчете на 1000 чел.) в 1994 г. соответственно составят не 13,7 и 6,6 чел., как представляет официальная статистика, а 13,7 и 8,3 чел., в то время как в 1990 г. они составляли 24,0 и 6,6 человек.

Предупреждение подобной демографической ситуации трудно представить без государственной опеки и разработки, претворения в жизнь определенной политики. Такая политика должна способствовать:

1. решению проблем социальной защищенности материнства и детства на уровне государственной политики;

2. постепенному вхождению воспроизводства населения в обычный, естественный ритм;

3. содействию посредством экономических рычагов проблемам упорядочения населения республики, в частности, оттока населения из городов, зоны бедствия, окраинных приграничных поселений и горных районов.